


ԻՐԱՔԻ ՄԵՋ ԱՄԵՐԻԿԵԱՆ ՈՒժԵՐՈՒՆ ԴԵՍ ԶԻՆԵԱԼ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԻՆ



Իրաքի մէջ ամերիկեան ուժերուն զէնքերը շարունակուեցան երէկ, մինչ Բրիտանիա կը յայտարարէր, թէ կ'ուսուժանաւորէ ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին մէկ նոր րանաձեւին որդեգրուած կարեւորութիւնը՝ երկրին մէջ բազմազգեան ուժերու հաստատումին համար:

Իրաքի մէջ բրիտանացի յատուկ ներկայացուցիչ ծոն Սովորոյ «Ֆայնիչըր Թայմզ» թերթին յայտնած է, թէ նման րանաձեւ մը շուրջ նախնական րանակցութիւններ կրնան քանի մը շարաթէն սկսիլ:

ՄԱԿին որ րանաձեւ մը որդեգրուեց առիթ պիտի տայ իմիջիայլոց շնորհատանի, Փաքիստանի եւ Թուրքիոյ կառավարութիւններուն, որ իրենց երկիրներուն հանրային կարծիքը համոզեն՝ իրաք ուժեր զրկելու անհրաժեշտութեան մասին, ըսած է ան:

Սովորոյ աւելցուցած է սակայն, որ Լոնտոն եւ Ուաշինկթըն կը սպասեն՝ լսելու Ֆրանսայի եւ Ռուսիոյ պահանջները՝ ինչ կը վերաբերի Իրաքի մէջ ՄԱԿի ունենալիք դերակատարութեան:

Մ. Նահանգներ եւ Բրիտանիա, որոնք Մարտին Իրաքի վրայ յարձակած էին առանց ՄԱԿի հաւանութեան, փորձած են՝ ցարդ առանց արդիւնքի, միջազգային համայնքը զօրաշարժի մէջ դնել, որպէսզի Իրաքի գրաւումին գինուորական եւ ելեւմր-

տական բեռը բաժնէ իրենց հետ:

Մօտ ատենէն Իրաք պիտի հասնի Լեհաստանէն եւ Սպանիայէն ուժերէ բաղկացած միաւոր մը:

Արաբական երկիրները մինչ այդ այսօր Գահրիէի մէջ ժողով մը պիտի գումարեն՝ Իրաքի վերականգնման ծախսերուն մասնակցելու կարելիութիւնը քննարկելու համար:

Մակաբի եղիպոտսի արտաքին գործոց նախարար ԱՏՄէտ Մահէր յստակ դարձուցած է, թէ ուժեր զրկելու հարց չկայ:

Մինչ այդ, Պաղատսի մէջ անջատ 2 յարձակումներու ընթացքին ամերիկացի 5 զինուորներ եւ իրաքցի թարգման մը վիրաւորուած են երէկ, ըստ ամերիկեան րանակին մէկ րանքերին:

Երէկ առաւօտուն, ամերիկեան ուժերը յայտնած են, թէ Թիքրիթի մէջ զիմադրութիւն ցուցաբերող բանալի այլ անձ մը ձերբակալած են:

Իսկ ականատեսներու համաձայն, իրաքցի ոստիկաններ երէկ կրակ բացած են զինեալներու վրայ, որոնք ձեռնառումը մը արձակած են ամերիկեան զինուորական փոխարակաւոր մը վրայ:

ՏԻ ՄԵԼՈ ԹՈՒՐԵՈՅ ԿՈՉ ԿՈՒՂՂԵ

Այլ զիծի վրայ Իրաքի մէջ ՄԱԿի ներկայացուցիչ Սերճիօ Վիէրա Տի Մէյօ երէկ Անգարայի մէջ կոչ

ուղղած է Թուրքիոյ, որ տնտեսապէս եւ քաղաքական գետնի վրայ օժանդակէ Իրաքի վերականգնման:

Արտաքին գործոց նախարար Ապտիլլա Կիլ ըսած է, թէ Թուրքիա պիտի շարունակէ «մարդասիրական ճիգերը», սակայն ան չեշտած է նաեւ, թէ Անգարա քաղաքական րնոյթի մասնակցութիւններ ունի Իրաքի ապագային մասին:

Թուրքիա մտահոգ է, թէ Իրաքի հիւսիսային գօտին հակակշռող քրտական խմբակներ կ'ուզեն անկախութիւն ձեռք ձգել:

Միւս կողմէ, Թուրքիոյ արտաքին առեւտուրի պետական նախարար Բուրաթ Թիւրքումէն երէկ ըսած է, որ Թուրքիոյ Իրաքի արտածումները գրեթէ 200 աւ հարիւր աճ արձանագրած են ամերիկեան զլխաւորութեամբ պատերազմին աւարտէն ի վեր:

(ԱՅՓ)

ԻԼՀԱՄ ԱԼԻԵԻ՝ ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՎԱՐՁԱՊԵՏ



Ազրպէյձանի նախագահ Հայտար Ալիեւի որդին՝ Իլհամ Ալիեւ երկրին խորհրդարանին կողմէ երէկ նշանակուեցաւ Ազրպէյձանի վարչապետ, փոխարինելով Արթուր Ռախիպաովին, որ հրաժարած էր: Հայտար Ալիեւ կը գտնուի Անգարայի «Կիլհանէ» հիւանդանոցը, առողջական անյույս վիճակի մէջ: Համաձայն Ազրպէյձանի Սահմանադրութեան, նախագահին անկարողութեան պարագային անոր պաշտօնը կը ստանձնէ երկրին վարչապետը:

Լրագրողներու հետ հանդիպումի մը ընթացքին, Իլհամ Ալիեւ մերժեց նախագահական ընտրութիւններուն մասին ակնարկութիւնները եւ ըսաւ, թէ պիտի կեդրոնանայ իր նոր պաշտօնին վրայ:

Ազրպէյձանի խորհրդարանը երէկ առաւօտուն գումարեց արտակարգ նիստ մը, որուն ընթացքին Իլհամ Ալիեւ վարչապետ նշանակուեցաւ՝ 101 թեր եւ 1 ձեռնպահ քուէներով: Այսպիսով, խորհրդարանականները կ'ընդառաջին 80ամեայ Ալիեւի պահանջին: Իլհամ Ալիեւ երեսփոխաններ, գործիչներ եւ օտար ընկերութիւններ զոհուեցան Ալիեւի յայտնեցին Իլհամի նշանակման մասին, սակայն ընդդիմադիրները քննադատեցին խորհրդարանին որոշումը: «Ենի Մուսաւաթ» կուսակցութեան նախագահ Իսա Ղամաթ նշեց. «Ասիլա այլ փորձ մըն է իլիանութիւնը բռնազրկելու եւ երկրին մէջ միապետական վարչակարգ հաստատելու»:

«Ռոյթթըր» լրատու գործակալութիւնը, վկայակոչելով Ազրպէյձանի մէջ գործող արեւմտեան դիւանագէտ մըրսաւ, որ Ազրպէյձանի իլիանութիւնները «կաթուածահար» վիճակի մէջ են: Վերջին երեսուն տարուան ընթացքին, բացի Հ. Ալիեւէն, երկրին մէջ ոչ մէկ որոշում որդեգրած է, եւ ժողովուրդին մեծ սպառ կը կարծէ, որ Իլհամ ատակ չէ իր հայրը փոխարինելու:

Հոկտեմբեր 15ին Ազրպէյձանի մէջ տեղի պիտի ունենան նախագահական ընտրութիւններ: Ազրպէյձանի կեդրոնական Ընտրական Յանձնաժողովը ընտրութիւններուն իրրեւ թեկնածու գրանցած է (Հայտար եւ Իլհամ Ալիեւներուն կողքին) ընդդիմադիր գործիչ Իսա Ղամաթը եւ երկու իլիանամէտ թեկնածուներ:

ԻՍՐԱՅԷԼ ՀՐԱՊԱՐԱԿԵՑ ԻՐ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼԻՔ ՊԱՂԵՍՏԻՆՅԻ ԲԱՆՏԱՐԿԵԱԼ ՆԵՐՈՒՆ ԱՆՈՒԱՆԱՅԱՆԿԸ

Իսրայէլ երէկ հրապարակեց մօտ ատենէն ազատ արձակուելիք պաղեստինցի կահարցու րանտարկեալներու անունները, միաժամանակ յայտնելով, թէ Այսրլորդանանի այլ չըջաններէ իր ուժերը անմիջապէս հեռացնելու ծրագիր չկայ:

Իսրայէլի բանտային սպասարկութեանց կազմէն վրայ հրապարակուած ցանկին մաս կը կազմեն 159 «վարչական րանտարկեալներ»՝ զինեալ պաթար մող կասկածելիներ, որոնք չեն զատուած: 183 ըրիչները ամրատանուած են հակաիրայէլեան գործունէութեան:

Բանտային սպասարկութեանց մէկ րանբերը յայտնած է, թէ ապօրինի կերպով Իսրայէլ մտած կամ ռեթային այլ գործունէութեան յանցանքով արդիւնաբերուած յաւելեալ 100 պաղեստինցիներու ցանկ մը յանձնուած է նախագահ Մոշէ Քացաւի որպէսզի ան ներում չնորհէ անոնց: Անոնց անունները չեն հրապարակուած:

Իսրայէլեան նշալիքայլը կը յարգէր կիրակի գիշեր կայացած իսրայէլեան նախարարական յանձնախումբի մը ժողովին:

Յանձնախումբը կազմուած էր բանտարկեալներու ազատ արձակման հարցով զբաղելու հարցերը լուծելու համար:

Պաղեստինցիք պահանջած էին իսրայէլեան րանտարկուած մէկ արգելափակուած պաղեստինցի 6000 բանտարկեալներու ազատ արձակումը, սակայն վարչապետ Արիէլ Շարոնի կառավարութիւնը յայտարարած է, թէ ազատ պիտի չարձակէ մարդ սպանած ունէ անձ:

Պաղեստինեան իլիանութեան նախագահ Եասէր Արաֆատ զատապարտած է մօտալուտ ազատ արձակումները, զանոնք «գեղձարարութիւն» որակելով եւ հարց տալով, թէ արդեօք ասիկա «խաղաղութեան ճամբու քարտէս»ին գործադրութիւնն է:

Իսկ րանտարկեալներու պաշտպան մէկ կազմակերպութեան նախագահ Իսա Քարաթաա, տեղի ունեցած վարկաբեկիչ որակած է, աւելցնելով, որ «Իսրայէլ կ'ուզէ իսրայէլ աշխարհը, թէ բան մը կ'ընէ, սակայն պիտի մերժենք այդ ցանկը ճամբու քարտէսին գործադրութիւնը նկատելով»:

Միւս կողմէ, Իսրայէլի

պաշտպանութեան նախարար Շաուլ Մոֆաթ երէկ շեշտած է, որ իսրայէլեան ուժեր Այսրլորդանանի որբէկ չըջանէ պիտի չբաշխուին, մինչեւ որ պաղեստինցիք քայլերու դիմեն «զինեալներու» զէնք, որոնք կ'ընդ մը եւ անոր 3 զաւակներուն վրայ յարձակուած են:

Աքսայի Նահատակներու Փաղանգներ» խմբակը ստանձնած է Կիրակի գիշեր հրէական Հար ձիթի րնակեցման վայրին մօտ տեղի ունեցած յարձակումին պատասխանատուութիւնը: Իսրայէլացի կին մը եւ անոր զաւակներէն մէկը ծանրօրէն վիրաւորուած են, իսկ երկու այլ զաւակներ՝ թեթեօրէն վիրաւորուած են:

Ամիս մը առաջ իսրայէլեան րանակը քաշուած էր Այսրլորդանանի Բեթղեհէմ քաղաքէն եւ չըջալայ գիւղերէ՝ ապահովութեան պատասխանատուութիւնը պաղեստինեան ապահովութեան ուժերուն փոխանցելու համաձայնութեան մը ծիրէն ներս:

Մոֆաթի եւ պաղեստինեան ապահովութեան հարցերու նախարար Մոհամէտ Տահլանի միջեւ անցեալ շաբաթ կայացած րա-

ԱՅՍՕՐ ԵՌԱՐԼՈՒՐԻ ՄԵՋ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ Դ. Յ. Դ. ԳԱՏԱՐՈՒՄԻ ԾՐԱՎԱԿՈՒՄԻՆ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ԲԱՅՈՒՄԸ

Հ. Յ. Դ. Երիտասարդական եւ Ուսանողական Միութիւններու համահայկական Ցրդ բանակումին առիթով Հ. Յ. Դ. Բիւրոյի Երիտասարդական Գրասենեակը երէկ երեւանի մէջ տուաւ մամուլի ասուլիս մը, որուն մասնակցեցան Հ. Յ. Դ. Բիւրոյի Երիտասարդական Գրասենեակի պատասխանատու Սարգիս Մկրտիչեան, Հ. Յ. Դ. Լիրանանի Երիտասարդական Միութեան Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ Բարիկ Չաքմաքճեան, Հ. Յ. Դ. Հայաստանի Երիտասարդական Միութեան Կեդրոնական Վարչութեան ատենապետ՝ Յովհաննէս Մեծ Գէորգեան, Հ. Յ. Դ. Յունաստանի Երիտասարդական Միութեան անդամ՝ Սօսէ Տէօքմէճեան, Հ. Յ. Դ. Նիկիոյ Աղբայեան Ուսանողական Միութեան վարչութեան ատենապետ՝ Իշխան Սաղաթեան եւ Սուրբիոյ Երիտասարդական Միութեան անդամ՝ Նախիր Մկրտիչեան: Բանակումին պաշտօնական բացմամբ պիտի կատարուի Օգոստոս 5ին, Եռարուրի մէջ, որմէ ետք բանակումը պիտի ընթանայ երկու հանգրուանով, առաջինը՝ Օգոստոս 6էն 12, Կարմրաքարի մէջ (Ղափան, Սիւնիքի մարզ), իսկ երկրորդը՝ Ասկերանի մէջ:

Սարգիս Մկրտիչեան ասուլիսին ընթացքին դիտել տուաւ, որ Հ. Յ. Դ. միշտ այլ մեծ կարեւորութիւն տուած է երիտասարդութեան եւ ուսանողութեան: Առաջին համահայկական րանակումը տեղի ունեցած էր 1983ին, Յունաստանի մէջ, այնուհետեւ 1984ին, 1986ին եւ 1992ին յաջորդաբար Ֆրանսայի, Կիպրոսի եւ Պուլկարիոյ մէջ: Հայաստանի վերանկախացումէն ետք Համահայկական բոլոր բանակումները տեղի ունեցան Հայաստանի մէջ (1997ին՝ Սեւան, 1999ին՝ Արցախ, 2001ին՝ Բիւրական):

Մկրտիչեան ընդդեմ, որ համահայկական բանակումներու նպատակներէն է համախմբել զաշխարհական երիտասարդները եւ ուսանողները, ստեղծելու համար ծանօթացման, մտքերու փոխանակման առիթ: Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը երիտասարդական եւ ուսանողական միութիւններ ունի 17 երկիրներու մէջ: Փաստօրէն, համահայկական բանակումներու մասնակցելու անոնց նպատակներէն մէկն է քննարկման առարկայ դարձնել համազգային մտահոգութիւններու ու ինչի իրենքը: Հայաստանի անկախացումէն ետք այս բանակումները դարձան լաւագոյն առիթը երիտասարդներուն ծանօթացնելու Հայաստանը, ուղղակի կապ ստեղծելու անոնց եւ հայրենի ժողովուրդին միջեւ:

Համահայկական Ցրդ բանակումին կը մասնակցին 15 երկիրներէ մօտ 350 երիտասարդներ եւ ուսանողներ: Բանակումը նուիրուած է Արցախեան ազատամարտի 15ամեակին եւ կը կրէ «Շարունակեք կերտուած յաղթանակներու ուղին» կարգախօսը:

նակցութիւնները՝ Այսրլորդանանի յաւելեալ երկու քաղաքներէ իսրայէլեան ուժերու հեռացման զծով համաձայնութեան մը զոյացման համար, որբէկ արդիւնք չէին արձանագրած:

Իսրայէլեան րանակը երէկ հաղորդած է, թէ «Աքսայի Նահատակներու Փաղանգներ» խմբակը սպանած է Կիրակի գիշեր հրէական Հար ձիթի րնակեցման վայրին մօտ տեղի ունեցած յարձակումին պատասխանատուութիւնը յարձակումը քաշուած էր Այսրլորդանանի Բեթղեհէմ քաղաքէն եւ չըջալայ գիւղերէ՝ ապահովութեան պատասխանատուութիւնը պաղեստինեան ապահովութեան ուժերուն փոխանցելու համաձայնութեան մը ծիրէն ներս:

ԱՊՊԱՍ - ԶԱՐՈՆ ՏԵԱԿՑՈՒԹԻՒՆ

Մինչ այդ, պաղեստինցի վարչապետ Մահմուտ Ապպաս երէկ իսրայէլեան պետական ծայնասփիւռին

յայտնած է, թէ այս շաբաթ տեսակցութիւն մը պիտի ունենայ իսրայէլացի իր պաշտօնակիցին՝ Արիէլ Շարոնի հետ:

Պաղեստինցի բարձրաստիճան պաշտօնատարի մը համաձայն, հանդիպումը Չորեքշաբթի օր (վաղը) պիտի կայացուի: Այլ զիծի վրայ, Շարոն Երէկ յայտնած է, որ Գահրիէ Միջին Արեւելքի խաղաղութեան գործընթացին մասնակից չի կրնար ըլլալ թէ՛ ազատ շարժակէ Եգիպտոսի մէջ լրտեսութեան յանցանքով րանտարկուած իսրայէլացի արքա Ազգամ Ազգամը՝ «ոճիրներու համար, զորս չէ գործած»:

Եգիպտոսի արտաքին գործոց նախարար ԱՏՄէտ Մահէր ըսած է, թէ Եգիպտոսի դերակատարութիւնը «որբէկ ձեռով կապուած չէ Շարոնի մտածածին կամ ուզածին», չեւտելով որ անոր արտայայտութիւնները «անարժէք են»:

(ԱՅՓ)

ՆԱԽԱՐԱՐ ՕՊԵՅՏ ՄԵԿՆԵՅԱԻ ԳԱՀԻՐԵ

Արտաքին գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Ժան Օպէյտ երէկ շեշտեց, որ Լիբանան կառչած կը մնայ ապալին իր սկզբունքներուն եւ արաբական միասնակալութեան արաբալիզման, ինչպէս նաեւ միջազգային օրէնքներու գործադրութեան: Ան նկատել տուաւ, որ Լիբանանը եւ Սուրիան պարտադիր անցքեր են հասնելու համար պաղեստինցի զաղթականներու տունդարձի իրաւունքին, եւ Միջին Արեւելքի մէջ հաստատելու արդար եւ անբողջական խաղաղութիւն:

Օպէյտ նշեալ յայտարարութիւնները կատարեց Պէյրութի միջազգային օդակայանին մէջ, նախքան Գահիրէ իր մեկնումը:

Նշեց, որ Գահիրէի մէջ Օպէյտ իբրեւ անդամ արաբ արտաքին գործոց նախարարներու յանձնախումբին, որուն յանձնուած է արաբական իրադարձութիւնները հետապնդելու առաքելութիւնը, պիտի մասնակցի յանձնախումբի արտակարգ ժողովին, որ տեղի պիտի ունենայ Արաբական Լիկայի կեդրոնատեղիին մէջ:

ԹՈՂՆՈՑ ԲՈՅՆԸ՝ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԻ ԸՆԹԱՅՐԻ ՄԵՋ

Ուրախութեամբ կ'ուզենք յայտնել մեր ժողովուրդի սիրելի գաւառներուն, որ Թոլնոց Բոյնը կը դառնուի վերակազմակերպումի ընթացքի մէջ՝ օրհնութեամբ վեհափառ Հայրապետին: Այս գծով յատուկ ծրագիր մը մշակուած է, նկատի ունենալով Թոլնոց Բոյնի իւրաքանչեւ առաքելութիւնը եւ մեր կեանքի ներկայ պայմանները, ինչպէս նաեւ ի խնդիր Թոլնոց Բոյնի ներքին կեանքի ու գործունէութեան առաւել կազմակերպման եւ հոն ապաստանած փոքրերուն ու պատանիներուն հոգեմտաւոր աճման ու կազմաւորման: Վերակազմակերպումի ծրագիրը կ'ընդգրկէ հետեւեւէլ մարզերը:

Ա) Աշակերտութիւն: Թոլնոց Բոյն պիտի ընդունին այն բոլոր մանուկները, որոնք որր են կամ քայքայուած ընտանիքներու գաւառներ են եւ ընկերային դժուար կացութիւններու մէջ կը գտնուին: Թոլնոց Բոյնի կողմէն է տէր կանգնել, սնունդ, խնամք ու հոգեմտաւոր կազմաւորում տալ ընտանիքէ զուրկ եւ փողոց մնացած Հայ մանուկին: Այս ուղղութեամբ յատուկ ուղեգրի մը արդէն իսկ պատրաստուած է: Եւ որպէսզի Թոլնոց Բոյն ապաստանած մեր գաւառները որակաւոր ուսում ու կրթութիւն ստանան, անոնք ըստ տարիքի ու ուսման մակարդակի իրենց ուսումը պիտի ստանան ազգային վարժարաններէ ներս: Հաստատութեան ներս կը պահուի մանկապարտէզի բաժանմունքը եւ կը ծրագրուի մօտ ապագային ստեղծել նաեւ արհեստագիտական յատուկ վարժարան:

Բ) Պաշտօնէութիւն: Որպէսզի Թոլնոց Բոյնի մեր գաւառներուն հոգեմտաւոր աճումը դառնայ աւելի ծրագրուած, ազդու ու մասնագիտական, խնամակալութիւնը որոշած է փորձառու ու մասնագէտ անձերով օժտել հաստատութեան պաշտօնէութիւնը:

Գ) Շինարարական վերանորոգումներ: Անհրաժեշտ է, որ Թոլնոց Բոյն ապաստանած մեր գաւառները առողջապահական հիմնական պայմանները լրացնող միջավայրի մէջ ապրին: Այս մտահոգութեան մեկնած, խնամակալութիւնը, միշտ վեհափառ Հայրապետին օրհնութեամբ, պիտի ձեռնարկէ վերանորոգութեան աշխատանքները: Թոլնոց Բոյնի գանազան շէնքերէն ներս:

Դ) Թոլնոց Բոյնէն ներս Գալիանեան Բոլորեւ Միաբանութիւնը կը շարունակէ իր ծառայական աշխատանքը եւ պատրաստ է յարմար թիկնածուներ ընդունելու, որպէսզի հոգեմտաւոր կազմաւորումէ ետք անոնք ապագային կարենան մաս կազմել բոլորեւ միաբանութեան:

Թոլնոց Բոյնի կապուած Հարցերուն գծով կարելի է դիմել հաստատութեան գրասենեակ 09-540887 եւ 09-540027 հեռաձայնի թիւերով:

ՓԻԵՌ ԸԸՆՈՒԻ ՄԱՐՍԻՆԸ ՅԱՆՁՆՈՒԵՑԱԲ ԸՈՂԻՆ

Հանգուցեալ երեսփոխան Փիեռ Հըլուի յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ երէկ՝ մարտի 14-ին Պէյրութի Մար ժըրմըս եկեղեցոյ մէջ, նախագահութեամբ մարտի 14-ի Նասրալլա Սֆէյր պատրիարքի ներկայացուցիչ՝ պատրիարքական ընդհանուր փոխանորդ Սամիր Եպս. Մապլումի:

Յուղարկաւորութեան ներկայ գտնուեցան խորհրդարանի նախագահ Նեպիհ Պըրրի, որ միաժամանակ ներկայացուց նախագահ Վոր. Էմիլ Լահուրը, Սուրիոյ նախագահ Պաշար Մատի ներկայացուցիչ Հայասան Տուէյի, որուն կ'ընկերակցէր Լիբանանի մէջ սուրիական ուժերու պատասխանատու Վոր. Ռաքոմ Ղապալէ, նախկին նախագահներ Էլիս Հըրաուի եւ Ամին ժեմալի, խորհրդարանի նախկին նախագահ Հիւսէյն Հիւսէյնի, նախկին վարչապետներ Սեյիմ Հըս եւ Ռաշիտ Սուլի, մեծ թիւով նախարարներ ու երեսփոխաններ, իրանական և սուրիական գերագոյն խորհուրդի ընդհանուր քարտուղար Նասրի Խուրի, մարտի 14-ի Պէյրութի առաջնորդ Պուլու Մաքար Եպիսկոպոս, ինչպէս նաեւ բարձրաստիճան անձնակազմի անդամներ, կուսակցապետներ, պիւնտրականներ եւ հոգեւորականներ:

Մարտի 14-ի պատրիարքութեան ընդհանուր քարտուղար Եուսէֆ Թոք Եպիսկոպոս ընթերցեց Սֆէյր պատրիարքի պատգամը, որուն մէջ շեշտեց, որ Փիեռ Հըլու միշտ ալ մնացած է ազգային միասնականութեան մարդը եւ այդ տրամաբանութեամբ մերժած է բազմաթիւ պաշտօններ:

Պատգամին մէջ նշուեցան նաեւ, որ Հըլու միշտ ալ համեստութեամբ եւ համարձակութեամբ պաշտպանած է ժողովուրդին իրաւունքները յատկապէս քուէարկողին իրաւունքը:

Ապա Պըրրի նախագահ Լահուտի անունով յետ մահու պարգեւատրեց Հըլուն:

ՕՍՄԱՐ ՔԱՐԱՄԷ ԱՀԱԶԱՆԳ ԿԸ ՀՆՉԵՑՆԷ

Նախկին վարչապետ, երեսփոխան Օմար Քարամէ երէկ շեշտեց, որ երկրին ընդհանուր պարտքը կարէն իսկ հասած է արդիւն գիծին, իսկ երկրին ճակատագիրը սեւ է:

Քարամէ վերահաստատեց, որ պարտքերը, մսխումը եւ փտածութիւնը քաջալերող ոչ մէկ օրինակի մի նպաստ քուէարկած է ինք իբրեւ երեսփոխան եւ աւելցուց, որ ինք պօրակից է ընդդիմադիրներուն, շեշտելով, որ միակ լուծումը քաղաքացիին մօտ է, որովհետեւ ան է, որ պէտք է արժեւորէ իր քուէն եւ ընտրէ ատակ անձնակազմի անդամները՝ իր եւ յառաջիկայ սերունդներուն ապագայի բարօրութեան ի խնդիր:

Քարամէ դիտել տուաւ, որ կը ծրագրէ կազմել քաղաքական հանդիպում մը, որդէ-զրդէ ու համար յստակ ծրագիր մը՝ փրկելու երկրին տագնապալի կացութիւնը:

«ԱԶԳԱԿ» - ՄՐՅԱՆԸ ԸՆԳՀԱՆՈՒՐ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՄՐՅՈՒՄ

Ստորեւ կը ներկայացնենք «Ազգակ»-ի կազմակերպած ընդհանուր գարգացման մրցումին երրորդ հարցարանը:

Այս հարցարանին 5 հարցումներուն ձիւղ պատասխանողներէն վիճակաձգութեամբ պիտի ընտրուի բախտաւոր մասնակից մը, որ պիտի շահի Պէյրութ - Վանա - Պէյրութ օդանաւային տոմսակ մը:

Իւրաքանչիւր մասնակից կրնայ խմբագրատուն ուղարկել միեւնոյն անունը կրող միայն մէկ կտրօն:

Մրցանքին մասնակցելու համար պէտք է օգտագործել «Ազգակ»-ի էջերուն մէջ տեղադրուած կտրօնը եւ ոչ՝ լուսապատճենները:

Հարցարանները պէտք է լեցուին եւ խմբագրատուն ներկայացուին առաւելագոյնը Հինգշաբթի, 7 Օգոստոս 2003, երեկոյեան ժամը 18:00:

ՀԱՐՏԱՐԱՆ ԹԻ 3

- 1.- Ո՞վ է ծէյս Պոմտի պատումներուն հեղինակը:
- 2.- Մայքըլ Շուլմանը քանի՞ անգամ հանդիսացած է «Ֆորմիլա 1»-ի աշխարհի ախոյեան:
- 3.- Ո՞ր կենսագիրը առատօրէն կը գտնուի մարիմիլի մէջ:
- 4.- Բնական ո՞ր աղետը կը չափուի «ոխիթըր» աստիճանով:
- 5.- Ե՞րբ կըրուած է Սելի դաշնագիրը՝ օր, ամիս, տարի:

ԱՆՈՒՆ.....
ՄԱԿԱՆՈՒՆ.....
ԵՆՆԵԱՆ ԹՈՒՎԱԿԱՆ.....
ԸՆՈՒՂԱՅՆԻ ԹԻ.....

ՆՐԱՅԻՆՈՒՄ.....

կացութիւնը: Քարամէ նշեալ յայտարարութիւնները կատարեց իրեն ի պատի տեղի ունեցած ճաշկերոյթի մը ընթացքին:

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-Ի ԱՅՍՕՐՈՒՄՆ 3ԱՅՏԱԳԻՐՆԵՐԸ

8:30.- Լիբանանեան մամուլի խորհրդներու ընթերցում՝ արաբերէն
9:40.- «Առաւօտեան տոմս»
9:45.- «Աստղիկ» կնոցական յայտագիր. հարցազրոյց Լեմա Սուրաբեանի հետ.
Նիթ՝ ամրան եղանակի աշակերտին տան պարտականութիւնները
11:30.- Լիբանանեան մամուլի խորհրդներու ընթերցում՝ հայերէն
3:00.- Արաբերէն յայտագիր. հարցազրոյց լրագրող Չէյնա Ֆայասի հետ
5:00.- «Տեսակետ»
Գիթ՝ Մանկապատանեկան տարիքի սոնետներ
8:00.- «Հարցա-մարտ» խաղ - մրցանք. ուղղակի ձայնափոխում

քին, որուն ներկայ էին երեսփոխաններ Նասրա Մուսաւա եւ Միխայել Տահէր, ինչպէս նաեւ պետական բարձրաստիճան այլ անձնակազմի անդամներ, քաղաքապետներ եւ թղթապետներ:

Իր խօսքի աւարտին Քարամէ ընդգծեց, որ ճնշում պէտք է բանեցուցուի որդէ-զրդէ ու համար յստակ ծրագիր մը՝ փրկելու երկրին տագնապալի կացութիւնը:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Օրը. Մալիկիէ Գասարեանի մահուան ամիսը, տիկին Անահիտ Ապտալեան 20,000 լ.՝ ՔԱՀԻ Ծերանոցին:

365 ՕՐԵՐԵՆ ՕՐ ՄԸ ՀԱՅ ԾԵՐԱՆՈՅԻՆ

Այո՞ք ձեր անհոգի հետեւեալ ազգայինը կը ստանձնէ օրուան մը ճաշի ծախսը 300 տոլարով: Տիար Գեորգ Արապեան իր եղբոր՝ Քիզանդ Արապեանի յիշատակին, 5 Օգոստոս:

Հովանաւորութեամբ՝ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՐՍԻՆԱԿՐՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՍԵՊՈՒՇ ՅՈՎԱՆՆԵԱՆԻ Կազմակերպութեամբ՝ ԺՐՊԵՅԼԻ ԱԿՈՒՄԻ ԿԱՐՉՈՒԹԵԱՆ ԸՆԹԻԵՒ ԵՐԵՎԱՆ Զարթ, 9 Օգոստոս 2003ի երեկոյեան ժամը 9:30էն սկսեալ «ՄԱՅԱՏԻՆ» ձաշարանին մէջ, Աննայա: Տոմսերը ապահովելու համար հեռաձայնել՝ 03-212799 եւ 03-232765 թիւերուն:

ՅԵՐԻԱԹ ՅԱՅԱՍԱՆ - 3

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԵԶԱԿԻ ՇՐՋԱՊՏՈՅՏ ԴԷՊԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԷՊԻ ԱՐՅԱՆ 8 ՍԵՊՏԵՄԵՐԸՆ 21 ՍԵՊՏԵՄԵՐ 2003

Շրջապտոյտի առաջնորդ՝ ՕՆՆԻԿ ԳԱՆԹԱՐԵԱՆ ՌԻՐԵ Ե ՏՅՅՈՍԱՆԸ ԱԹԹԱՐԻՍԻ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՐ

7 ՕՐԵՄԻ ԵՒ 14 ՕՐԵՄԻ ԵԶԱԿԻ ՅԱՅԱԳՐԵՐ ԱՆԹԱՍՄՈՒՆ 01/ 260850 - 03/ 586337 ANSER TRAVEL 01/ 562044 - 01/ 562870

Arabic header with logos: البيرق, السقيل, الزينار, النصار, السفير

Սատտամ Հիւսէյնի երկու պաւակներուն թաղման արարողութիւնը, Իրաքի մէջ ամերիկացի պիւնտրներուն դէմ շարունակուող յարձակումները, պաղեստինեան տագնապը, իսրայէլացիներուն կողմէ համաձայնութեան խախտումն ու պաղեստինցիներուն կողմէ նոր գործողութիւններու գործադրումը: Իսրայէլեան խախտումները ցուցանիչ են, թէ համաձայնութիւնը մօտ օրէն վերատեսութեան կրնայ ենթարկուիլ, նշած է օրաթերթը:

«Անուար»-ի համաձայն, Համաս յայտապարտած է, թէ համաձայնութեան կտրուած մասը չի վրկեր խախտումներուն պատասխանելու իրաւունքէն:

Իրաքեան պարգաւնումներուն ակնարկելով «Սաֆիր» գրած է, թէ Էմիլ Լահուտի այցելութիւնը Տէյր Էլ Քամար եւ հանդիպումը մարտի 14-ին Նասրալլա Սֆէյր պատրիարքին հետ:

Լիբանանեան իրադրութիւններուն մասին «Մուսաբալա» գրած է, թէ Սֆէյր պատրիարքի պատարապի ընթացքին քննադատեց իրականութիւնը ծածկելու եւ արդարութիւնը մէկդի դնելու փորձերը:

«Լիուս» գրած է, թէ վարչապետ Հարիրի պիտի տեսակցի աշխատանքներու խորհուրդին հետ, իսկ Սֆէյր պատրիարք կոչ ուղղեց անցեալի ու անհամաձայնութիւններուն էջը դնելու: Ըստ թերթին, վէճեր յարուցող թղթածրարները պիտի բացակային Հինգշաբթի օր գումարուելիք նիստին:

«Սաֆիր» գրած է, թէ Տէյր Էլ Քամարի մէջ յատկանշական էր նախագահ Լահուտի եւ Սֆէյր պատրիարքին ձեռնուիլը:

«Անուար» հարց տուած է, թէ պատահած պայթումը արդեօք պատահական տուելիք պիտի ստիպէ՞ իրենց արձակուրդներէն վերադառնալու: Ըստ թերթին, Հրպայի յայտապարտած է, թէ մօտ օրէն պիտի պատասխանէ այդ հարուածին:

Պաղեստինեան իրադրութիւններու կարգին «Լիուս» գրած է, թէ

Շարուն յայտարարեց, թէ Եգիպտոսի դէրը խաղաղութեան գործընթացին մէջ կախեալ է լրտես Ապպամ Ապպամի եւ պաղեստինցի 982 գերիներու ապստարձակումէն:

Ըստ «Սաֆիր»-ի, լարուած մթնոլորտ մը կը տիրէ պաղեստինեան պարիսպին եւ իսրայէլեան ուժերուն հեռացումն անոյն յարցումները ցուցանիչ են, թէ համաձայնութիւնը մօտ օրէն վերատեսութեան կրնայ ենթարկուիլ, նշած է օրաթերթը:

«Անուար»-ի համաձայն, Համաս յայտապարտած է, թէ համաձայնութեան կտրուած մասը չի վրկեր խախտումներուն պատասխանելու իրաւունքէն:

Իրաքեան պարգաւնումներուն ակնարկելով «Սաֆիր» գրած է, թէ Էմիլ Լահուտի այցելութիւնը Տէյր Էլ Քամար եւ հանդիպումը մարտի 14-ին Նասրալլա Սֆէյր պատրիարքին հետ:

Լիբանանեան իրադրութիւններուն մասին «Մուսաբալա» գրած է, թէ Սֆէյր պատրիարքի պատարապի ընթացքին քննադատեց իրականութիւնը ծածկելու եւ արդարութիւնը մէկդի դնելու փորձերը:

«Լիուս» գրած է, թէ վարչապետ Հարիրի պիտի տեսակցի աշխատանքներու խորհուրդին հետ, իսկ Սֆէյր պատրիարք կոչ ուղղեց անցեալի ու անհամաձայնութիւններուն էջը դնելու: Ըստ թերթին, վէճեր յարուցող թղթածրարները պիտի բացակային Հինգշաբթի օր գումարուելիք նիստին:

«Սաֆիր» գրած է, թէ Տէյր Էլ Քամարի մէջ յատկանշական էր նախագահ Լահուտի եւ Սֆէյր պատրիարքին ձեռնուիլը:

«Անուար» հարց տուած է, թէ պատահած պայթումը արդեօք պատահական տուելիք պիտի ստիպէ՞ իրենց արձակուրդներէն վերադառնալու: Ըստ թերթին, Հրպայի յայտապարտած է, թէ մօտ օրէն պիտի պատասխանէ այդ հարուածին:

Պաղեստինեան իրադրութիւններու կարգին «Լիուս» գրած է, թէ

«ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»ԵՆ ԱՄԵՆ ԵՐԵՐԶԱԲԹԻ ԼՍԵՑԷ «ՏԵՍԱԿԵՏ» ՅԱՅՏԱԳԻՐԸ Երեքշաբթի, 5 Օգոստոս 2003ին, կէսօրէ ետք ժամը 5:00ին «ՏԵՍԱԿԵՏ» յայտագրին միւթք է

«ՎՏԱՆԳԱՒՈՐ ԵՐԵՒՈՅԹ ՄԸ՝ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՏԱՐԻՔԻ ՍՈՆԸՌԻԹԻՒՆԸ» Կը խօսին՝ ՏՈՔԹ. ԱՅՏԱ ԱՄՍՏՈՒՐԵԱՆ-ԱՅԱՐԵԱՆ ՄԱՆԿԱԿԵՏ ԱՆԻ ՏԵԿԻՐՄԵՆԸՆԸ 3այտագրին ամբողջ տեւողութեան հեռաձայնեցէք «Վանայ Զայն»՝ 241199 եւ 267657 թիւերուն եւ տուէք ձեր կարծիքը:

ԱՆԱՐԱՏ 3ԳՈՒԹԵԱՆ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ Ս. ՇՈՒԼԱՆ ՄԱՆԿԱՊԱՏՈՒՐ ՀԵՌ. (01) 449580 ԷՇՐԵՅԻԷ - ԺԵՀՂՍՈՒԹԻ Ա. Շուլան մանկապատանը կը սկսի Երկուշաբթի, 1 Սեպտեմբեր 2003 առաւօտեան ժամը 7:30էն մինչեւ 5:00 եւ կ'ընդունի օտարերկրացիները իր 4 տարեկան: 3ԱՏՈՒԿ ԳԻՐՈՒԹԻՒՆ ԱՅՆԱՏՈՂ ՄԱՅՐԵՐՈՒ Մանկապատանը ընդ յատուկ անձնակազմ, կարող հիւանդապահուիլ եւ պատասխանատուութիւնը յանձնուած է Ս. Շուլան մանկապատանի քոյրերուն: Մանրամասնութեան համար դիմել Ս. Շուլան մանկապատանի տնօրէնութեան: Հեռաձայն՝ (01) 449580, Էշրեֆի: ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ

Միջապգային Քաղաքական Կեանք

ԶԱՆԳՈՒԹՅԱՆ ԿՈՐԾԱՆՄԱՆ ԶԷՆՔԵՐՈՒՄ ԶԳՈՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՈՒՐԻՇ ԽԱՔԿԱՆՔՆԵՐ

ՄԻՐՈՅԻ ԱՆԳԱՐԱ ԱՅԵՆՈՒԹԻՒՆԸ

ԹՐՔԱԿԱՆ ՆՈՐ ԳՈՐԾԵԼԱՌԸ

Քաղաքական վստահ ենք, որ չըջանա՞ մը, Ուաշինգթոնի օրհնութեամբ, իրաք իսկապէս ունէ՞ր գանգոլածային կործանման գէնքեր: ասիկա կրնայ պատահած ըլլալ իրան-իրաք պատերազմին ընթացքին: Այնուհետեւ, Մոցի երկրորդ պատերազմին ընթացքին ըսուեցաւ, որ ամերիկեան ուժերը ենթարկուած էին տեսակ մը քիմիական եւ կենսաբանական յարձակման, երեւոյթ մը, որ տակաւին պէտք է հաստատուի: Քուէլթի ազատագրումէն ետք, ՄԱԿի Ապահովութեան խորհուրդի շարք մը որոշումները իրաքը դրին մանրակրկիտ քննութիւններու եւ գանգոլածային քանդումի գէնքերու կործանման պարտադրանքին տակ:

Այժմ Բրիտանիոյ Համայնքներու Տան եւ Նոյնիսկ ամերիկեան Քոնկրէսին մէջ հնչող գլխաւոր հարցադրումը այն է, թէ արդե՞ք գանգոլածային քանդումի բոլոր գէնքերը, ներառեալ՝ Բրիտանիոյ եւ Միացեալ Նահանգներու կողմէ իրաքին ծախուածները փճացուեցան: Կամ արդե՞ք անոնց մէկ մասը տակաւին գոյութիւն ունի: Արդե՞ք իրաքի վրայ յարձակելու հաւանութիւն ստանալու համար Ուաշինգթոնի եւ Լոնտոնի ներկայացուցած տեղեկագիրներն ու արդարացումները պարզապէս սուտեր եւ չինձու տեղեկութիւններ էին: Արդե՞ք անոնց նպատակը իրենց անձնական ռազմավարական շահերն էին միայն, եւ ոչ անպայման՝ Սատտամին տապալումն ու անոր գանգոլածային քանդումի գէնքերէն ձեռքազատումը: Ինչպէս բոլորս գիտենք, իրաքի մէջ ոչ մէկ գանգոլածային քանդումի գէնք գտնուած է ցարդ:

Գրեթէ վստահ ենք, որ բոլոր այն փաստերը, որոնք հիմքը կազմեցին ամերիկեան եւ բրիտանական վարչապետներու ատճառ քայլերուն՝ չինձու էին, ինչպէս որ էր պարագան նաեւ Նիկելիայէն իրաքի կողմէ մեծ քանակութեամբ իւրանիումի գնումին: Ինչ որ հաստատ կրնանք ըսել այն է, որ թէ՛ Միացեալ Նահանգները եւ թէ՛ Բրիտանիան շատ ծանօթ են իրաքի ռեզերվուած գանգոլածային քանդումի գէնքերու պահեստին չափին, եւ գիտեն նաեւ, թէ անոնց ճիշդ որքան փճացուած է: Եթէ ենթադրենք, որ այդ գէնքերուն մէկ մասը տակաւին գոյութիւն ունի, ապա այդ երկրները պիտի չխօսին այդ մասին, որովհետեւ ամերիկեւերիտանական ընկերութիւններուն կողմէ իրաքի գէնքեր ծախելու աշխատանք տեղի ունեցած էր երկու կառավարութիւններուն գիտակցութեամբ եւ համաձայնութեամբ: Այս իրողութիւնը կը հաստատեն երկու տուեալները: Առաջինը բրիտանացի երեսփոխանի մը մէկ խօսքն է՝ արտասանուած պատկերասփիւռէն ուղղակի սփռուած երեսփոխանական այն նիստին ընթացքին, երբ վարչապետ Թոնի Դեյրը իրաքի գէնք պատերազմ մղելու համար Համայնքներու Տան հաւանութիւնը կը պահանջէր: Երեսփոխանը հարց տուաւ, թէ «արդե՞ք այս գէնքերը, որոնցմէ իրաքի գինթափուելը կը պահանջէք, նոյն այն գէնքերը չե՞ն, որոնց դժո՞ղք քանի մը տարի առաջ ես եւ խորհրդարանի քանի մը անդամները համաձայն գտնուեցանք, որ անոնք ծախուելի իրաքին եւ բրիտանական ընկերութիւններուն արտօնեցինք, որ արտածեն գանոնք: Ինչո՞ւ ծախեցիք գանոնք իրաքին եւ հիմա ինչո՞ւ՞ կ'ուզէք գինթափել իրաքը»:

Երկրորդ տուեալը այն է, որ ամերիկեան վարչապետներու ռուսիոյ-

ժող ձեռք ձգեց իրաքի գէնքերու ծրագիրին շուրջ ՄԱԿի Ապահովութեան խորհուրդին ներկայացուած տեղեկագիրը: Հազիւ ՄԱԿի շէնք հասած, «Մի. Այ. Էյ.»-ը գործակալներ մտան շէնք, գողցան տեղեկագիրը եւ հետագային վերադարձուցին զայն անոր մէջէն իրաքի գանգոլածային քանդումի գէնքերու մասնիկներ ծախած ամերիկեան եւ բրիտանական ընկերութիւններուն ցանկը հանելէն ետք:

Իրաքի վերահսկիչ մարմինի Չէնքերու Հակակշիռի Յանձնախումբի անդամ մասնագէտ մը հաստատեց այդ իրականութիւնը եւ աւելցուց, թէ ամերիկեւերիտանական ընկերութիւններուն կողմէ տրամադրուած իրաքեան գանգոլածային առեւտուրի նախարարութեան մօտ արձանագրուած էին «շատ զգալուն արտագրութիւններ» խորագիրին տակ: 1985 եւ 1990 թուականներուն միջեւ գանգոլածային քանդումի գէնքերուն ծախար հասաւ 1,5 միլիարտ տոլարի: Գործընթացներուն մեծ մասը կրկնակի նպատակի կը ծառայէր, այսինքն՝ անոնք նաեւ կ'օգտագործուէին գանգոլածային քանդումի գէնքեր շինելու նպատակով:

Մասնագէտը նաեւ աւելցուց, թէ՛ «իրաքի վրայ արշաւելէն առաջ կատարուած օդային յարձակումները կը նպատակադրէին քանդել Միացեալ Նահանգներուն մէջ շինուած սարքերը, եւ ոչ թէ ռազմավարական կեդրոններ, ինչպէս Սպիտակ Տան բանբերը նշեց»:

Հարցը ուրեմն պարզապէս Միացեալ Նահանգներու եւ Բրիտանիոյ միջեւ ընթացող ներքին խնդիր մը չէ, այլ՝ միջազգային խնդիր մը, որովհետեւ իրաքի շէնքերն էին, որ դուռ բացաւ պատերազմին, որուն պատճառով գինթութիւններ գրաւումի ենթարկուեցաւ իրաք եւ աւերուեցան երկրին ենթակառոյցն ու հաստատութիւնները:

Ամբողջ աշխարհը զգուշացուց Ուաշինգթոնը ու Լոնտոնը իրաքի վրայ յարձակելու վտանգներէն: Անոնց անձնական շահերը, սակայն, գերիշխեցին իրենց ուղեղներուն վրայ: Գրաւումը իրականութիւն է եւ այսօր իրաքը այնպիսի քառսի մէջ է, որուն նմանը չէ տեսնուած բացի Սոմալիոյ մէջ՝ ամերիկեան խանգարիչ միջամտութեան պատճառով: Հետեւաբար, նախընտրելի է, որ իրաքին հսկողութիւնը փոխանցուի ՄԱԿին՝ Արաբական Լիգային համագործակցութեամբ, իսկ ամերիկացի անփորձ եւ տգէտ կառավարիչը տուն երթալ: Նպատակը պէտք է ըլլայ իրաքի ազատ ընտրութիւններու կայացումը եւ ընտրութի իրաքեան կառավարութիւն մը, որ արդարօրէն իշխէ իրաքի ամբողջ տնտեսականը եւ բոլոր համայնքներուն վրայ:

Ասիկա միակ միջոցն է ամերիկացիներուն եւ բրիտանացիներուն համար, որ ազատին այն ամբաստանութիւններէն, թէ անոնք ազատօրէն կ'ուզեն տիրանալ իրաքեան քարիւղին եւ կ'ուզեն կայսերապաշտութիւնը վերադարձնել շրջան, որպէսզի սեղմեն օդակը ասիական ուժերուն շուրջ, կործանեն իրանը եւ յառաջանան դէպի կասպից ծով:

«ԱՐԱՊ ՆԻՈՒԶ»

ԵՂԲԱՅՐՄ՝ ՍԱՄՈՒԷԼ

Շարունակուած՝ 4րդ էջէն

դաշնակցային մեր նորագոյն դատաւորը՝ Սամուէլ Տէր Եղիայեան»:

Ուրախութեան աչքերս սկսան ջրոտիլ, երբ պատահական վրայականս տես եղայ այն պատմական պահուն, Միացեալ Նահանգներու Ծերակոյտին յատուկ նիստին, որուն ընթացքին ծերակուտականները խանդավառ միջոցառում մէջ միաձայնութեամբ կը հաստատեն նախագահ Պուշի առաջարկը՝ վաւերացնելով գաղթականական հարցերու դատաւոր Սամուէլ Տէր Եղիայեանը, իբրեւ հայազգի ներգաղթած առաջին դաշնակցային դատավորը Միացեալ Նահանգներու պատմութեան մէջ:

Իւրաքանչիւր ծերակուտական, դեմոկրատ թէ հանրապետական, երբ իր «այո» քուէով ու ստորագրութեամբ պատմութիւնը կը կերտէր, ժողովուրդին խանդավառութիւնը նոր գագաթներ կը բարձրացնէր: Իւրաքանչիւր քուէ կը նմանէր Ֆուլթոնի դաշտին վրայ զարպիսէն ներս արձանագրուած փայլուն կէտի մը:

